

հերձուածոց եւ բարձաձգութեան որդւոց իւրոց, մինչեւ ապաւինել ոմանց 'ի նոցանէ յինքն իսկ Լեւոն, առ զդէմ ունելոյ այլոցն եղբարց. իսկ ընդ արեւելակողմն ձգեաց զբազուկ իւր մինչեւ յԱմանոս, եւ անցեալ ընդ դրունս նորին՝ նուաճեաց եւ զբերդորայս սահմանապահս Անտիոքայ. դիպող ժամու թողեալ՝ զ'ի սպառ թօթափելն յինքենէ զստուերական երեւոյթ մեծարանաց առ Բրինձն:

Արդ մինչեւ զայսչափ տարածութիւն երկրի եւ զգերիշխանութիւնն 'ի վերայ վաթսուն կամ եօթանասուն պարոնայց եւ բերդատեարց բաւական ինքեան գրեաց յընծայումն թագաւորութեան,– մանաւանդ զի ահա բարձաւ իսկապէս թագաւորութիւն Փռանկացն յարեւելից՝ կորստեամբ Երուսաղեմի, (թէ եւ սոսկ անուամբ կոչէին այնպէս գահընկեցիկքն.) եւ զի եւ Կիպրոս եւս 'ի նոյն նկրտէր խորհուրդ թագակապութեան,– համարեցաւ թէ եհաս ինձ ժամ ամբառնալոյ զլուիս թագափայլ՝ յերկրի աստ իմում, 'ի միջի երից այլալեզու եւ այլակրօն մեծաց ազգապետութեանց, Յունաց, Թուրքաց եւ Փռանկաց եւ 'ի բարձրագոյն զլուիս յետնոցս՝ 'ի կայսրն Ալամանաց կառոյց զակն, 'ի նմանէ ընդունել զթագն, նմա եւեթ լինել լիճ, անուամբ լոկով. եւ ոչ այսչափ միայն, այլ եւ յայլմէ եւ 'ի գերագունէ զլիտոյ՝ ընդունել զնշան կամ զհաւանութիւն թագաւորութեան, 'ի տիեզերական հայրապետէն Հռովմայ, զորոյ աջ տեսանէր առաջին դրոյիչ արեւմտից եւ օրինիչ հանուրց: Եւ մինչ նա յայսմ խորհրդի մտաց էր, կանխեաց քան զգալուստ նորոց Գ Խաչակրաց՝ թուղթ մի Քահանայապետին Կղեմայ Գ, գրեալ 'ի վերջ կոյս 1189 ամի, առ ինքն Լեւոն, որպէս եւ առ կաթողիկոս մեր Գրիգոր Տղայ, համանման պատճենիւ, յորդորելով զերկոսին եւս կարեկցաբար օժանդակել Արեւմտեայց՝ պատրաստելոց 'ի դիմել յազատութիւն Սրբոյ երկրին, զինուք, ընչիւք եւ անձամբք, եւ հաւասար նոցին ընդունել շնորհս հոգեւորականս: Արդ՝ կամ 'ի թղթոյ աստի Քահանայապետին՝ յաւէտ խրախուսեալ Լեւոնի, կամ մանաւանդ զիտելով զերկեմաւ յառաջ նուիրակութիւն Գուլիելմի արքեպիսկոպոսի Տիրոսի¹⁹ եւ զայլոց՝ յարեւելից յարեւմուտս, 'ի թախանձ օգնութեան եւ ազատութեան Սրբոյ քաղաքին եւ արեւելեան քրիստոնէից, բազում հաւանութեան է՝ թէ կանխեալ գրեալ էր եւ ինքն 'ի ձեռն հրեշտակաց՝ առ կայսրն մեծ,

¹⁹ Սա ինքն է անուանի եւ գերագոյն համարեալ 'ի պատմիչս Խաչակրաց, որ եւ ծնեալ իսկ էր յերկրի անդ Ասորւոց: